

Թեամբ այցելութեան դան այս սրբավայրերն ու յարգեն դանոնք :

Շարժած սուրբ եռանդէն եւ ջերմեռանդ զգածուններէ՝ բանակցեցաւ Մելքիսեղեկի եւ այն քահանաներու հետ, որոնք այն Եկեղեցւոյն եւ սուրբ Նշխարաց հոգատարութիւնն ունէին, որպէս զի թոյլ տան իրեն, որ պեղէ եւ քանի մը նշխարք դուրս հանէ : Այս թոյլտուութիւնը շնորհուեցաւ իրեն : Եւ որովհետեւ այս յիշեալ քահանաները միշտ մեծ կարօտութեան մէջ կը գտնուէին թէ հոն նստող պաշտօնեաներու առօրեայ ծանր ծախքերու եւ թէ այն մեծամեծ հարկերու պատճառաւ, զորոնք կը վճարէին մահմեդականներուն, խորհեցաւ Հայրը ըստ կարողութեան քանի մը Փրանկ իբր ողորմութիւն տալ անոնց : Այս բանը ըրաւ անոնց Հայրը, որովհետեւ անոնք շատ արժանաւոր եւ կաթողիկէ եկեղեցւոյ շատ համակիր անձեր էին :

Նախանձոտ հակառակորդներն երբ տեսան թէ Գուլիէլմոսի այս սիրոյ գործէն իրենց բաժին չինկաւ, սկսան հռչակել թէ Մելքիսեղեկ կաթողիկոս եւ իր քահանաները սրբոց Նշխարները Ֆրանկներուն վաճառած ըլլան :

Ասոնց համակարծիք Զուղայեցիները, որոնք Դաւթի կողմն էին, այս բանը ձեռք առին իրենց գործերը եփելու. եւ ծածկելով իրենց անբարի մտքերը՝ ամբաստանեցին եւ մեղադրեցին զՄելքիսեղեկ Պարսից թագաւորին առջեւ :

Շահը սկսաւ չարչարել զՄելքիսեղեկ .